

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտրա 3 փետր.
Ամեն անգլիական հաւանութիւն տը-
ւին դեպքանախորհրդոյ գումարման , որ
վիճինայի մէջ նիստ պիտի ընէ :
Փետրի 3 փետր.
Արեւելեան վերաւորաց օգնութեան
համար արտաքոյ կարգի ներկայացում մը
տրուեցաւ իտալական թատրոնին մէջ և
40000 ֆրանք արգելքը գոյացաւ :

Լոնտրա 4 փետր.
Երեսփոխանաց ժողովին մէջ պատե-
րալմական դործոց նախարար Պ. Կ. Հար-
տի՝ Պ. Կլապթընի պատասխանելով ը-
սաւ թէ՛ խնդրած վեց միլիոնի վարկը
հարկաւոր է , վրան դի Ռուսիոյ և թուր-
քիոյ ստորագրած հաշտութեան պայման-
ները տարտամ են :
Վիճարանութիւնը վաղուան յղուե-
ցաւ :

Պէրլին 6 փետր.
Այսօր գերմանական խորհրդարանը
բացուեցաւ : Այս առթիւ կարգացուած
կայսերական ճառը կը յուսայ որ խաղա-
ղութիւնը քիչ օրէն պիտի կնքուի և դեռ-
պահապարհորդին սկզբանց տեսական դոր-
ծադրութիւնը պիտի ապահովէ չա՛հ ու-
նեցող կողմանց համաձայնութեամբ , որով
Արեւելից մէջ խռովութեանց վերադարձն
խտրաւ պիտի արդիւնէ և դործադրուելիք
բարենորոգումներն ալ դո՛ւ պիտի ընեն
քրիստոնեայ ժողովուրդները :

Լոնտրա 5 փետր.
Օտմ. Բոնա. 8 3/4
Փոխ. 1865 8 7/8
» 1869 8 3/8
» 1871 34 1/4
» 1872 15 1/2
» 1873 8 1/4
» Եղիպա. 53 3/4
Անգլ. Բոնա. 95 7/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Օտմ. լիազօր պատուիրակ Սէր-
վէր և Նամիք փաշաներն երէկ Կ.
Պօլիս վերադարձան Ադրիանուպօլսէն ,

Բ. Դաւան հեռագրով հրաման ղըր-
կեց Սիւլէյման փաշային որ մինչև
ցնոր տնօրէնութիւն թշնամութեան
չսկսի Օտմ. սահմանն արշաւող Հելլե-
նական զօրաց գէմ :

ԶՈՒԱՐՃԱԿԱՆՔ

ԿՍՄԻԹ

Ժամանակաւ իմաստասերին մէկը ը-
սած է .

« Քիչ խօսէ՛ ու շատ մտիկ ըրէ : »
Թէպէտ և որոշ չղիտցուի թէ իմաս-
տասերն ո՛ր պարագայի մէջ ըսած է այդ
խօսքը , բայց կը կարծուի թէ տասը կան-
գուն երկայնութեամբ յօդուածներ գրող
խմբագիրներէն մէկուն ըսած ըլլայ . հաւա-
նական է նաև որ պարտաւորելով իրմէ ստակ
ուղելու գտած ըլլայ և անոր ըսած ըլ-
լայ . կրնայ ըլլաւ որ . . . Բայց ի՞նչ փոյթ
մեղ , որո՞ւ ուղէ՛ թող անոր ըսած ըլլայ ,
բաւական է որ այդ խօսքը շատ իրաւացի
խօսք մ'է՛ . որովհետեւ շատ խօսողները
բան մ'ալ չեն խօսիր , ամենին շատ խօ-
սողներն ամենին քիչ խօսողներն են . ա-
սիկայ ա՛յնչափ յայտնի ճշմարտութիւն
մ'է՛ որ դեպքան մ'անգամ չկրնար ուրա-
նալ :

Ուրիշ իմաստասեր մը մեր իմաստասէ-
րին այս խօսքին շատ հաւանելով՝ քայլ մ'ալ
ինք տուաւ և ըսաւ .

« Բնաւ մի՛ խօսիր ու շարունակ մտիկ
ըրէ : »

Եւ թատրոնին վարագոյրը գոցուեցաւ :
Վեցամեայ բուսութեամբ ազդին և կա-
ռավարութեան մեծ ծառայութիւններ
մատուցանելէ ետե՛ւ՝ եթէ այսօր ընթեր-
ցողացս կը ներկայանամ , չկարծուի թէ
խնդալով դիտաւորութեամբ է , որովհետեւ
խնդալը արդիւնած է իրիւր փնտրողար
հասարակաց բարոյականութեան , այլ կըս-
մի՞տեղու և միմիայն տեսածներս պատ-
մելու նպատակաւ Մատիս ստորադ կիջ-
նամ այսօր , աղաչելով մեր ընթերցողնե-
րը որ խնդալէ՛ գլուխստան և զաւեշտ բա-
ւը բնաւ չարտասանեն :

Այս յայտարարութիւնն ընելէ ետեւ
պզտիկ դէպք մը պատմելով կը կնքենք
մեր յատկաբանն՝ որ կնքած գինաւ

Պատիւի լուր կուտայ թէ Սէր-
վէր փաշան հրամարական տակեր է
արտաքին գործոց նախարարութիւնէ :

Լա թուրքի կը ծնուցանէ թէ
Վիճ. Սալիմ ան հրաւէր դրեր է Նի-
քօլա Մեծ դ. քոն որպէս զի քանի
մ'օր մայրաքաղաքս անցունելու հա-
ճի :

Սպարապետի գումար նստող պա-
տերազմական տեսանէ Արամհանի
հրամանատար Հիւսէյին Սապրի փա-
շային դատաստանն աւարտելուն պէս՝
Ապաիւլ Գէրիմ և Բէտիֆ փաշանե-
րուն դատաստանը պիտի սկսի :

Ադրիանուպօլսոյ կուսակալութեան
Միւսթէշար Խօրատոնճեան Յովհան-
նէս էֆէնտին , որ Ռուսաց Ռօստով օ
մտած ժամանակ հոն կը գտնուէր ,
տեղւոյն Օսմանեան իշխանութեանց
մեկնելէն ետեւ երկու օր հոն մնալու
պարտաւորեցաւ՝ ապաստանելոց և
Չէրքէզաց հոնկէ մեկնելուն հսկելու
համար , և այս դարձը կատարելէ ե-
տե՛ւ՝ ինք ալ վերջին չուգնաւով Կ.
Պօլիս եկաւ :

Ռուսերը Ռօստովիօէն ցորէն և
այլ արմախք գաւրստանելու արգել-
քը վերացին :

Օտմ. երեսփոխանական ժողովոյ
առաջարկութեամբ Դանուբեան բա-
նակին նախորդ հրամանատար Մէհ-
մէտ Ալի փաշան ալ գատի ենթար-
կեցաւ պատերազմական ատենին
տալիս :

Կըրուի թէ Ադրիանուպօլսոյ եր-
թով ուղղող ճանապարհորդք Գեր-
մանիոյ դեսպանատունէն անցագիր
պիտի ստանան երկու մէծիւթէ վը-
ճարելով :

Ռօստով օ գրաւող Ռուսական զօ-
րաց հրամանատարն է Օլտէնպոլսկի

դուքսը : Յիշեալ նաւահանգիստէն
եկող նաւերուն անցագիրը տեղւոյն
Օսմանեան քառանկիւնայի պաշտօ-
նատարներուն կողմէ կը արուի միշտ ,
բայց երեք չորս օրէ՛ ի վեր նաւա-
հանգստին Ռուս հրամանատարին
ստորագրութիւնն ալ կը կրէ : Քաղա-
քին չըջակաները թափառող աւա-
րառու Չէրքէզները՝ Ռուս հրամա-
նատարին տնօրինած խիստ միջոցնե-
րուն վրայ բռնորովին անհետացան :

Հինգշաբթի օրը Բումբէլէն եկող
երկու գաղթական բամաքներ հետե-
րին սղջիկ մը Ղալաթիայէն անցած
ժամանակ , աղջկան քրիստոնեայ ըլ-
լալը տեսնուելով , Քօմիսիօն խանին
մօտերը խռնեալ Յոյնք կողքեցին տ-
ոին զայն բամաքներուն ձեռքէն և
Պ. Զարիֆիի գրատունը տարին , ուս-
կից ալ յիտոյ ստիկանութեան դու-
ռը տարուեցաւ՝ Յունաց Պատրիար-
քարանէն դրկուած յոյն քահանայի
մը հետ :

Փոքիզի Առամպէլէ Նատիօնալ լը-
րագիրը կը ծանուցանէ թէ Անգլիա-
ցի սեղանաւորք՝ ի ժողով գումարուե-
լով՝ թուրքիոյ յճարելիք պատերազ-
մական սուգանաց խնդրովը կղբա-
ղին , Սալիք աղբուրէ իմացուած է ,
կըսէ յիշեալ թերթը , թէ Լոնտրայի
սեղանաւորները միջամտութիւն պի-
տի ընեն՝ յանուն թուրքիոյ պար-
տաւէրանց , և կը պատրաստուին օգ-
նել Սալիմին՝ այնպիսի պայմաննե-
րով , որք թէ՛ յաղթողն և թէ՛ յաղ-
թեալը կարենան զօհանել :

Կայսերական հրամանաւ՝
Ադրիանուպօլսոյ կուսակալութեան
թղթակցութեան գլխաւին նախորդ-
գլուխ խղրահիմ Սարիմ պէյ՝ առա-
ջին նախարարին կնքապահ և քա-
տուղար անուանեցաւ :

« Տէր եթէ զըթմուս իմ բանաւ » մը ա-
ւելցուցի և սկսայ ինքնիշխան մտածել թէ՛
սակերաց չուկային մէջ ե՛րբ և որո՞ւ
արդեամբ չինուեր են այս շարժական
մատուցները : Ժամ մը ետքը հարցունե-
լով տեղեկացոյ որ այս մատուցները
Ալաթիութեան հսկառակ ըլլալով , թշնամ-
ւոյն մօտենալը տեսնելուս պէս Պօլիս
գաղթեալ են :

Ճանրաս շարունակեցի դէպ ի՛նչ Արքէ-
ճի : Աստուած իմ , այս ո՛րչափ աւանակ ,
ո՛րչափ կով , ո՛րչափ ձի . . . մարդ ինք-
զինքն աստուի մէջ կը կարծէ . . . դադ-
թականէն աւելի անտուն . . . և ո՛ր-
չափ ալ աման . . . քսաննոց թուղթի
պզտիկ էջ մը . . . մինչդեռ Ֆէօ մը կամ
Վանայ կառու մը գնել ուղես՝ վից հա-
րկրեաց թուղթէն պակաս չես կրնար
տանել :

Շիտակը խօսելով՝ ամանութեանը չիղցի
դիմանալ , կատուի տեղ պզտիկ էջ մը
տաի և տուն տանելով սենեակս դրի :
Հետեւեալ օրը մեծ դարմանօք տեսայ որ
մուկ մը և կատու մը բռնեալ է . ուստի և
տունեկու մէջ պահուելու արժանի խո-
նար՝ անտուն մ'է : Միայն մէկ յան-
ցանք մ'ունի , բազմոցներու և բարձերու
մէջ խոտ չձգել կուտէ կոր . . . ա՛յնչափ
անթիւ է խեղճը : Իր ընթացքին չիղցի
գուշակել թէ՛ պալմութեան հսկառակ է
թէ համարիտ : Ռուսի որդեցի որ Նի-
կոպոս մարդարէին գիմնէ՛ որ մը և սանկ
պզտիկ դուշապութիւն մ'ընել տամ :

Ընթերցող , արթնի՛ն օգուտ քաղէ .
ասանկ ամանութիւն քսան տարին ան-
գամ մը կը պատահի : Կս օգուտ քաղեցի
և պարծանք կրնամ ըսել . եթէ արեւել-
եան խնդիրէն ուրիշները ինքնօրինութիւն ,
անկախութիւն և . . . թիւան վերջաւա-
րութեամբ ուրիշ բանից պատուիցան , ես
ալ դո՛ւն իշու մը տէր եղայ . և կարծեմ
թէ պատմութիւնն ալ քիչ մը կարեւոր-
ութիւն կուտայ այս բանին :

ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԵՍՓՈՒՄՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎ

Նիստ 25 յաւի (չորեքշաբթի)

Միտիլիի երեսփոխան Զաֆիրաքի
էֆէնտի ծանոց ժողովին թէ Պուր-
կաղի մօտակոյ Սթամբուլի գիւղի
քրիստոնեայ բնակչաց կոտորածին
հեղինակ հարկւարացեալ Նուրի աղան
և Պուրկաղի գալմագամը բանտար-
կեցան մայրաքաղաքս մէջ և քրն-
նութեան ենթակեալ են : Ծանոց
նաև թէ կանոնաւոր զօրաց հազա-
րապետ մը , Սալիք պէյ անուն , Լիւ-
լէ Պուրկաղէն անցած ժամանակ բը-
նակիչները պաշտպաններ էր Չէր-
քէզներուն դէմ , որք աւաւարու-
թեան պիտի մասնէին յիշեալ աւա-
նը : Ժողովուրդն երախտագէտ ըլ-
լալով՝ շնորհակալութեան տեղեկա-
գիր մը զրկեր է Յունաց պատրիար-
քարանը : Զաֆիրաքի էֆէնտին տ-
առաջարկեց որ ժողովն յիշեալ զինու-
րականին այս բարի վարմունքը դո-
ւէ :

Սիւլէյման պէյ երեսփոխանն ը-
սաւ թէ Սալիք պէյ հազարապետն
յուր պարտականութիւնը միայն կա-
տարած է :

Ռիւլէ քանի մ'երեսփոխանք գլի-
տոցութիւն ըրին թէ Սալիք պէյ Լիւ-
լէ—Պուրկաղը պահպանելու պաշտօն
չունէր , ոյլ պարզապէս անկէ ան-
ցեր էր , և թէ ժողովը պարտաւորաց
պաշտօնատարները խտրու պարտա-
ւած ժամանակ՝ բարի պաշտօնատար-
ներն ալ պէտք է քաջալերէ :

Ժողովը միաձայնութեամբ յայտ-
նեց թէ Սալիք պէյին ընթացքը դո-
ւետից արժանի է :

Գոնեայի երեսփոխան Սիմէօնաքի
էֆէնտի . — Ղալաթիոյ լրագրաց մէջ
կարգացի թէ Չէրքէզներն հրապա-

Յաղագրութեան հրեշտակը վերջապէս
եկաւ . . . Զօրուէն . . . չողեկապքով :
Ամեն մարդ կուրախանայ , բայց ես
չեմ ուրախանար , որովհետեւ հրեշտակնե-
րու վրայ համակրութիւն չունիմ , որով
հետեւ անոնք անոր ասոր հոգին առնելու
համար կուգան կերթան :

— Այս անգամուսն հրեշտակը հոգի չը
պիտի առնէ , դրամ պիտի առնէ եղեր :
— Գոնէ սա հրեշտակը համոզելիք ու
թղթագրամ քէլինք :

Թայմզ կըսէ .
« Ռուսիա իր յապաղումներովը մեծ-
սխալ կը գործէ » :
Ես կըսեմ .

« Անդրիոյ՝ յապաղմամբ գործած սը-
խալին հետ մրցելու համար է » :

Թաղուհին տեսակապի պատուանդանը
տալ ուղեր է Լօրտ Պրօքսիմիլիտի , բայց
նա չէ ընդունել :
Եթէ ես ըլլայի Լօրտ Պրօքսիմիլիտի
տեղ՝ կատնէի տեսակապի ու քաշներս կը
կապէի :

Ձեզի բան մը ըսեմ , հրապարակի վը-
րայ պէլէլիներն աւելի սուտ կը պարտի-
կոր , բայց բարեբաղդաբար այս սուտե-
րէն մէկ քանին թէլուհանէի պէլէլիներուն
պէս մարդ չընդունիր կոր :

Այլ յիշէ՛ք , անցեալները երկերկուքը
սաննոց թուղթ տուինք Չէրքէզի մօտե-
րը շինուած ամրութեանց համար . արդ
հիմա կըսեն թէ՛ Ռուսիա տաղարկած է
եղեր որ այդ ամրութիւնները սարսիւն ,
և մեք ալ նորէն երկերկուք քսաննոց
թուղթ պիտի տանք եղեր անոնց տարուե-
լու ծախսեցը համար :

Ես այս պրոցին չհաւատացի , մահա-
ւանդ անոր համար չհաւատացի որ Ռու-
սիա այս առաջարկութիւնը չըրած՝ անձ-
րեւները զանոնք տարեցին :

Ըսելիքս սա է որ ամեն խօսքի հա-
ւատք ընծայելու չէ :

մահալը իմարը, ուսում համար չէ... քիչերի բուսումն, էնի գարու խա...

Պալատէ մահարբէր իւլ էսամի... վարտաթը բուսումնէ չէ սայիրէնին...

Սամաթիւտէ թիւսը եւ մէկը... սի ճատտէսինտէ Արթին գարփանքն...

Ռ. Յ. Պէրպէրեան... Ա. Ռ. Ա. Ջ. Ի. Տ. Բ. Ե. Բ... Բերլինաւ, Մահ Սահրապ, Ճաւա,...

ԺՕԶԼԵ ՊԱՍՍԱՄԻ... Հեղինակ... ԱԼԵԿՍԱՆԴՐ ԷՏԻՄԱՆ

Թարգմանեց Գ. Եղամանեան... Աշխարհամանօթ հեղինակին նշա...

ՉԱՆԱՆ ԵՒ ՓԱՌՆԱՆ Ա... Գրեց Ծերունին Գարբիկ Աստանեան...



ՇԻՐԻԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՒԵՆԱԽՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1878 ՅՈՒՆԻՎԵՐ 3 ԵՐԵՎԱՆԻ ՕՐԻՆ ՍԿԱՆԱԼ

ՄԻՆՁԵՆ ԳՈՒՆՎԱՐ 31

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈՒԵՆԱԽՆԵՐԸ

Table with 2 columns: Ժամ (Date) and Իւրաքանչիւ շահաւոր (Individual Beneficiary). Rows list dates from 2 to 14 and names of donors and recipients.

Կառավարէն Եւրոպ շահաւոր

Table with 2 columns: Ժամ (Date) and Կառավարէն Եւրոպ շահաւոր (Individual Beneficiary). Rows list dates from 3 to 6 and names of donors and recipients.



ԱՅՏԵՐԻ ՎԻԿՈՐԸ

Ով որ իր մարմնուն թափելը չու... զեր, Վիկորի վիկորի կոչուած մար...



ՈՃԱՌ... Որոշանք տուաւ, մոր... ինքը կը կապուցնէ ու...



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՂԱՅԱՆ

Կ. Պոլսի Ղալաթիա Միմասեան և... Ընկերաց Ամերիկայի Մաղաղան կը...

Table with 2 columns: Ժամ (Date) and Կառավարէն Եւրոպ շահաւոր (Individual Beneficiary). Rows list dates from 8 to 12 and names of donors and recipients.

Ուրախ օրերը ժամ 5 ին կամուրջն շողենաւ մը... Լուր իսկիւտար, Գուզի, Պէյլ, Չէնկէլ, Վանիք, Գանա, Ա...

ԻՒՍԿԻՆՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՒԵՆԱԽՆԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Date), Կառավարէն Եւրոպ շահաւոր (Individual Beneficiary), Կառավարէն Եւրոպ շահաւոր (Individual Beneficiary), Կառավարէն Եւրոպ շահաւոր (Individual Beneficiary). Rows list dates from 2 to 7 and names of donors and recipients.

ՈՒՐԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Date), Կառավարէն Եւրոպ շահաւոր (Individual Beneficiary), Կառավարէն Եւրոպ շահաւոր (Individual Beneficiary), Կառավարէն Եւրոպ շահաւոր (Individual Beneficiary). Rows list dates from 2 to 7 and names of donors and recipients.

Այս րազիբը շարախը երեք անգամ... կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբ...

ԽՈՐԱԳԻՐ-ՏՆՕՐԸՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՌՈՒՄ ԼՐԱՎՈՐՈՑ